

3⁰. Եւս եւ այլն, կը վերածուին լոի*ի. օր. հվա* կա (հիւանդ կայ), բա* կացի (բանտ գացի), Յէրվա*, մարդը Բար էա, ըսի* մը (լաւ մը) հըվը*ծա (հիւանդացայ):

Բաղաձայններու մասին մինչև հիմա տըրուած օրէնքները գիր մը ջնջելու եղանակի մասին էին: Բայց այս ընդհանուր օրէնքներէն զատ բաղաձայնները կրնան կրել նաև մասնակի փոփոխութիւններ, հետևեալ կերպով. Առաջին՝

1⁰. Ե գրեր կը փոխուի ֆի, ֆեւ, ֆեօս, ֆեա, ֆեօս, ֆեդ, ֆեօդ (հոն, հոս, հոդ) ձևերուն մէջ:

2⁰. աւհետ կը ջնջուի հապա = բար բառին մէջ:

3⁰. առ հասարակ թեթև անկգալի հնչում ունի. այս պատճառով և արգելք կ'ըլլայ բաղաձայններու ջնջուելուն. ինչպէս՝ կրակ հանեա, մարդ հո* (հոդ) լընեար. Թէրոտանդ, հետս կիւզանս:

4⁰. Բ գրին հետ միացած հր խումբը նի կը վերածուի, Միւն = Միհհրան բառին մէջ:

5⁰. քիչ անգամ կ'աւելնայ բառի մը սկիզբը. օր. հըմը = (թրք. ամա) բայց:

Երկրորդ՝ 1⁰. Բ գրեր կը ջնջուի պարսը, (բարձր), յեպի (երբ) բառերուն մէջ:

2⁰. Իր տեղը կը փոխէ քօճրգը, նեօրսը, աւդա (թանձր, նոսր, ակաւայ) բառերուն մէջ:

3⁰. Բ ք խումբը կը ջնջուի խա = երբայ բառին մէջ. իհա կամ իյալ արտասանուելուն ձայնաւորներուն միացումէն առաջ կուգայ:

Երրորդ՝ երկու յաջորդական չ գրեր կը փոխուին կրկնակ չի. զոր օր. պլի՛ն, կլի՛ն, կի՛ն, կ'ըլի՛ն:

Չորրորդ՝ 2 կ'ըլլայ կ, կեօշնալ (ճանչնալ) բառին մէջ:

Հինգերորդ՝ հալեօդ բառին մէջ խ վերածուած է հի, իսկ դ՝ վի:

Բոլոր այս կանոններէն ետք դիտել պէտք է սակայն թէ, հայ գրական լեզուն ես սովորական խօսուած լեզու է գարձած Աւրան. բեզի մէջ. ուստի և շատ ձևեր կորսնցուցած են իրենց բնիկ կերպարանքը և վերածուած են գրական ձևին: Երածկաբանութիւնները՝ ինչպէս որ յետոյ պիտի տեսնուի, բոլոր

գրական լեզուով են, և առանց սոյն ձայնական օրէնքներուն:

ՀՐԱԶԵԱՅ Յ. ԱՃԱԿԻԱՆ

Շարայարեչի



Ն Մ Ո Ց Ե Մ Ի

ՍՈՒԿՐԱՏԱՅ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

(Հանուած երեսասղենեան ընտիր օրինակէն)

Բ-Է-Ն-Է-Ն մախրող պրակի մէջ տրուած ծանուցման համեմատ, կը հրատարակենք մեր կայելս վերոյիշեալ բոլորգիր ձուլագրմ ընդօրինակուած մէկ հատուածը, որ կը համապատասխանէ յէջմիածին հրատարակուած Մեծ Սոկրատայ 185-197 երեսներու: Մեծը կը փափաքէիմք հատուածիս աղբթթը դնել մասնատագրեալս ի Տէր-Մովսիսեանէ, որպէս զի՝ որոնք որ վերջինս ձեռք բերելու և բաղդատելու դիւրութիւնն չունին, այդու կարենայլմ գաղափար մի կազմել Մեծ Սոկրատայ երկու օրինակաց, — այն է էջմիածնի և երուսաղեմեանի, — ամենամեծ զամազանութեամ մասին. — սակայմ տեղոյն ամօթութեամ պատճառաւ հարկադրուեցանք վերջինը միայն հրատարակել, այնպէս՝ ինչպէս որ կը մերկայացնէր մեզ մեր ձեռքը եղած ընդօրինակութիւնն, առանց փոփոխելու ամէնք բառ մի կամ տառ մի: Կէտաւ դրութեանց համար՝ պէտք է ասել, թէ տեղ տեղ աւելցուցեր և փոփոխեր եմք ըստ տրամաբանական ըմթերցանութեամ, միջանկեալ մատակարարութիւնները՝ գլխաւորներէն զամազանելու և դիւրամականացի ըմեթու համար: Եւ որովհետեւ թարգմանութեան մէջ կամ, աստ ամը, մթին բացատրութիւններ և բառեր, յումարեմ լեզուի օրինաց հետեւողութեամբ եղած կրնատ արտայայտութիւններ կամ լատինաբանութիւններ, որոնք ըստ ինքեան որչափ որ կորուլի են և վսեմ, սակայմ հայ լեզուաց կրնամ ամսովոր և ամհասկանալի երեւիլ, ամոր համար կարեւոր դատեցնիք դնել ամոց քով, փակագծի մէջ,

ման յունարէմը, և երբեմն պլ լռելայն պա-
համջուած քառերը. այսպէս վարուած ենք ման-
քանի մի յատուկ ամուսնց հետ: Այն տեղերը,
որ կամ խամգարմամ հետքեր կը տեսնուին
կամ չէին համապատասխաներ մեր գործածած
յոյն օրինակին, ի ստորեւ՝ ծամօթագրութեամբ
չամացած ենք պարզել: Այս եւս պէտք ենք ա-
սել, թէ այսպիսի պարագայից մէջ՝ հայկական
թարգմանութիւնն ընդհանուր կերպով կը հա-
մաձայնի լեւոն Ալատիոսի գործածած օրինակին,
որ ըստ Վալեսիոսի ծամօթագրութեանց ընտրե-
լազոյնն եղած կ'երեւի: հայկական թարգմանու-
թիւնն եւս հաւանօրէմ այս զատակարգիս պատ-
կանող օրինակի մի վրայ կատարուած է, մա-
նաւանդ թէ աւելի կատարեալի մի, որ իւր
հմութեամ պատճառաւ գերծ լինելու էր ընդ-
օրինակութեանց միջոցով յետոյ ուրեմն սպրդուած
վրիպակներէն: Միով բանիւ այս տեսակետովս՝
հայերէն թարգմանութիւնն, — և թէ՛ օր մի ամբող-
ջապէս հրատարակուի, պիտի լինի միջնորդ եզր
մի՝ Սոկրատայ պատմութեան հիմ քննադիր և
սեր ծեռք հասած յունարէն օրինակները վե-
րակազմելու: Այսպէս կամ այնպէս՝ վստահ ենք,
թէ հաստատելի հրատարակութիւնն մեր մայր-
ընթաց յօդուածին մէջ ըսածները բոլորովին
պիտի հաստատէ:

Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵՆ

ԱՅՅ փոխադրելի է առ ժամայնս՝ ի
պատմութիւնս՝ ընդ նմին ժամանակաց յա-
րեւիս եղելոցն, (և) աստուստ սկսանել²
(ἀρτεστον δὲ ἐντεσθεν): Որք Արիստին կող-
մանն եպիսկոպոսունք՝ մեծ քաջաբերութիւն ի
թագաւորականն հրամանէ առնուին, և յար-
դարէին ընդունել զժողովն. սակա որդի՝ փորը
ինչ յետոյ աստացուք: Բայց յառ ի նոցանէն

1. Այս բացատրութիւնն չունի յոյն բնա-
գիրն, որով կասկածելի կը մնայ իբրև յետա-
մուտ յաւելուած. բայց ինչ հակառակն աւելի
հաւանական կ'երևի, զի ուրիշ տեղ թարգմա-
նիչն միշտ հաւատարիմ մնալով բնագիրն՝ բառ
կամ բացատրութիւն յաւելցուցած չէ:

2. 8-րդ բնագիրն ընթերցուածէն կը տեսնուի,
թէ հայն ըլլալու էր. էն աստուստ սկսանել
անկ է ինչ:

յեղեալսն յառաջինն ժողովու՝ նախկին ըն-
թացուք:

Քանզի Ակակիոս և Պատուփիլոս՝ զՄար-
սինոս զերուսաղէմացեացն եպիսկոպոս ար-
տաքսեալք, զԿիւրիգիոս փոխանակ նորա կար-
գեցին. իսկ զՄակեդոնիոս, (որ) զմերձագոյնն
ի Կոստանդինուպոլիս աշխարհս և քաղաքս
խախտէր, սպասաւորս զընտանի դիմանն՝
հակառակ եկեղեցեացն. նախակարգեալ¹, իսկ
Կիւրիգիոնի՝ զԵղեւսիոս ցուցեալ եպիսկոպոս,
և Նիկիոմոքիոյ՝ զՄատթիոնիոս, որ նախկին
իսկ սարկաւազ էր կարգեալ ի Մակեդոնիէ,
որ էր փոյլ առ ի շինել արանց և կառանց
վանորայ:

Բայց եթէ որպէս Մակեդոն զշուրջ Կոս-
տանդինուպոլիս զաշխարհսն և զքաղաքս քան-
դէր, այժմ ճառեցից: Քանզի ուս, որպէս
ասացի, ըմբռնեալ յեպիսկոպոսութիւնն, բիր
չարիս առնէր զխորհաւազացն զնորայն. և ոչ
միայն զեկեղեցոյն իւր զիշխանորս (δισχυρι-
νομένης²) վարէր, այլ և զՆաւախանոսս:
Տեսեալ զնոսա զհամագոյութիւնն խորհելով,
ընդ նոսին ապա վարէին և նորա, և ընդ
նոսին կրէին զատուպոյսն՝ փայտի ապա և
եպիսկոպոսն նոցա՝ Արդեդիոս³ (Ἀγέλιος)
անուն:

Իսկ բազումք և ի նշանաւոր երկիւղած
արանց ըմբռնեալք՝ առնջէին, զի ոչ կա-
մէին վայելել (μετέχειν) ի հաղորդութենէ
նոցա: Իսկ յետ չարաբանացն՝ բռնութեամբ
հազարդել ի խորհրդոյն հարկաւորէին. քանզի
փայտի բացեալք զքերան արանց, տրիւս-
նէին զխորհուրդն: Իսկ զայս կրաւղքն՝ մե-

1. Նոնեալն կը հասկցուին իբրև աւեր բայի՝
Ակակիոս և Պատուփիլոս: Դիտելու է, որ յոյն
բնագիրն հրատարակելէք եւս մեկնութեան կարօտ
գտած են այս տեղին:

2. Այսպէս է յամեն 1767 Վալեսիոսի ուր-
բագրութեամբ եղած Տուրինի կամ տաւրեան
տպագրութեան մէջ:

3. Ձի գիտցուի, թէ ինչ պատճառաւ մուտ
գտած են այս անունն մէջ իր տառերէն՝ փո-
խանակ յուն. Վտաքս. Հետեւաբար յունարէն
աւելի կատարեալ օրինակի մի յայտնուելով
պիտի կարելի լինի մեկնել այդ կնիքը:

ծաղոյն ևս քան զայլ զպատօյն տանջան(ս)՝ զայս համարէին. կանայս և մանգուն ըմբռնեալք՝ պղծել հարկաւորէին. իսկ եթէ որ հրաժարէր կամ այլ ազգ ինչ ընդդիմաբանէր, նոյնժամայն հետեին վերք, և յետ վիրացն կապանք և կապարանք, և այլքն զծնողից, յորոց մին կամ երկուս յիշեալ՝ յայտնազոյն զարագործութիւնսն և զօխորախսն Մակեդոնի և զորոց յայնժամ ամենեւորեմ (ἀμαρτωλῶν) . այս՝ լսաւագացն կարգեցից : Վասն զի կանանցն՝ ոչ առեալ յանձն հաղորդիլ նոցայոյն, զստինս նոցա եղեալ ի տապաւնակի (κλιβατῷ) սղոցէին : և այլ կանանցն զնոյն անմտութիւն առնելով՝ զմանս երկաթովք, իսկ զմանց՝ ձուռովք ժայրագունիք (ὠστὸς εἰς ἄκρον) քեռացանելովք ի հուր մատուցեալք այրէին : և առաքարացոյն (ξέφυ) քան զհեթանոսացն՝ պատիստ այս ի քրիստոնէիցն կոչեցելոց լինէր : իսկ զայս՝ եւս ի բազմակեմ (μακροχρονιωτάτου) Աբսալոնս (Ἀδελφον-τος) լուայ, զոր յառաջուումն յիշեցի ի գիրքս¹ . որ էր քահանայ Նաւատիանոսացն աղանդոյ, և կրել աւեր և սա Արիանոսայն ոչ սակաւ չարչարանս : Էւ ևս այսքան քահանայութեան հասեալ պատուի, և հանդերձ Աղեքսանդրա Պեփղազոնեաւ ձգնակցաւ (συνασχούντι) իւրով՝ ի բանդ մտանել և վերս առնուլ բազումն և կրել ապա զտանջանսն սա աւեր : իսկ զԱղեքսանդր՝ ի բանդի ի վիրաց վախճանել աւեր : որ և թաղեցին իսկ յաջու կողման նաւագնացուն (πλούσαντι) Բիւզանդիոյ գոգին, որ կոչին Եղջիւր՝ (Κέρας) հուկ ի գետորայն, ուրանաւ և եկեղեցին և Նաւատիանոսացն՝ Աղեքսանդրի համանուն (ἐπώνυμος) : Բայց բաւնային ապա Արիանոսըն, հրամանան Մակեդոնի, և այլս բազումն՝ ըստ քաղաքացն՝ եկեղեցիս : և զի և զՆաւատիանոսացն՝ որ հուկ ի կոչեցեալն էր Արագի (Πελάργος), որ կայ ի Կոստանդինուպոլսի : Բայց այսորիկ աղագաւ՝ զայս րնքնաբար (ῥιδικῶς) յիշեցի,

և զամ ճառերով՝ որքան ինչ ի ծերոյն Աբսալոնայ լուայ : Թագաւորին հրամանն և Մակեդոնի բրուտութիւնն՝ քանդելով¹ (καταραιοῦσαι) համապոլեթեանն խորհաւոց (ἡ)եկեղեցին հրամայէին : և հասանէինն ապա հրամանն և ընտելութիւնն՝ հակառակ (ἡ)եկեղեցւոյն, և ճեպէին հրամայեալքն՝ զայն առնել, բառնալ զնախակոչեցեալն եկեղեցի :

Բայց՝ սքանչանայի և ինձ այսուհետեւ (θαυμάσαι οὐν μοι ἔπειτα) յընթեան ի վերայ ժողովրդեանն Նաւատիանոսաց, եթէ զորպոյնն ունէին զնախանձ և զփոյթ առ իւրեանցն եկեղեցի, և զբարեմտութիւնն՝ զոր ունէին առ ընթեանս : և զի որք յայնժամ յեկեղեցւոյն յԱրիանոսացն արտաքսեալք՝ այժմ խաղաղութեամբ ընդունին զեկեղեցին : Քանզի իբրև ճեպէին քանդել զեկեղեցին, որոց հրամայեալն էր, ժողովէր բազմութիւնն մարդկան Նաւատիանոսաց, և ոմանք ի համազարեալք զեկեղեցին՝ յայլ փոխեցին տեղի : իսկ տեղիս այս՝ յայնկոյս է քաղաքիս, որ Սիւկանն անուանի, և է երեքասուներորդ պատու (κλίμα) Կոստանդինուպոլսի : Բայց փոյթ լինէր եկեղեցւոյն փոփոխումն, ժողովրդի բազմի՝ (λαοὺ πολλοῦ) մեծաւ յաւստութեամբ փոխաբերեալ (μεταφερόντων) զհաւքանդի մինն՝ բերէր ինցի, իսկ միւսն՝ քար, իսկ միւս այլն՝ փայտ, և այլ որ՝ այլ ինչ : և առեալք տանէին ի Սիւկա և Նիպատուարք լինէին և կանայք, և փորձեցին տնովք՝ աղաքս համարեալք² (εὐχῆν ἡγούμενοι) կառարին, և մեծ առնուլ շահ : զի որոշեցւոցն յԱստուած՝ պահապանք ողջ (ἀκραστοί) արժանաւորէին լինել : Էւ այսպէս, ապա, յայնժամ Նաւատիանոսացն եկեղեցի՝ ի Սիւկա փոխաբերեալ լինէր : Բայց ժամանակաւ ինչ յետոյ, յետ վախճանին Կոստանդիանուսի³ (Κωνσταντίνου), Թուլիանոս թագաւոր

1. Վերջին դիմորդն ա՝ կը Նշանակէ յիմ գիրս կամ ի գիրքս : Յայն՝ ունի Բիւզա եղակի թուով :

1. Յուն. Ընադրէն կը տեսնուի, Թէ հայերէն հին օրինակն ևս ունենալու էր քանդել :

2. Ընդօրինակողին համարելի է այս վերպահաւ վասն զի ուրիշ տեղ ուղիղ կերպով Կոստանդինոս կը գրէ :

զայնժամանակ՝ զտեղին՝ ի բաց հրամայեաց տալ, և նորոժամայն վերստին շինել հրամայէր. և ժողովուրդն առժամայն, ըստ նմին տարինսկի, անդրէն տանելով զնիւթն, զեկեղեցին՝ յառաջնումն շինեցին տեղով, և վեհագոռնացուցանալ՝ (βελτιώσαντες) Անտուսիս համանուն (φερωνύμωας) կոչեցին. բայց եկեղեցին ապա, որպէս ասացի, առ Յուդիանոսի կանգնեցաւ:

Իսկ յայնժամ երկաքանձիար որ՝ (ἄμφοι οἷτε) եկեղեցւոյն, և որք Նաւատիանոսացն՝ առհասարակ վարեալք լինէին. վասն որոյ և որք եկեղեցւոյն պիղծ համարէին (ἐβδελύσσοντο) յաղաքարանան (εὐχτηροίς) աղաւթել տեղիս. յորս Արիանոսըն ժողովին: Իսկ յայլ երիսն, քանզի այսքան ի ներքս ի քաղաքին ունէին եկեղեցիս Նաւատիանոսըն, յայտոսիկ եկեալք՝ առ միմեանս աղաւթէին, և փոքր ինչ միջոցաւ միաւորիչ (ἐνωθῆναι) նոցա, եթէ ոչ Նաւատիանոսըն պահեալ զնախկինն պատուէր՝ հրամարէին. սակայն զայլ բարեմտութիւն պահէին առ միմեանս յամբարութեամբ, յառաւել քան զմեռանելն ընդ միմեանց (ἀλλήλων) նկրտեալք (ἀρούμενοι): Վարեալ լինէին ապա ի նոյն (ἐν τῇ αὐτῇ) նոստանդիւնապոսի, և ըստ այլ աշխարհաց և քաղաքաց և նոյնժամայն (αὐτίκα γούν) ի Կիւղիկոնի՝ Էղեսիոս եպիսկոպոս՝ զմեմեն (ὁμοίως ἄμα) Մակեդոնի չարեացն առնէր քրիստոնէիցն, և մեռայն ուրեք վարելով և շրջելով գնտաւ. և զՆաւատիանոսացն եկեղեցի, որ ի Կիւղիկոն, աւերեաց ցլատակ:

Իսկ Մակեդոնիոս՝ զկոփիչ չարեացն, որովք ըմբռնէին, առաւել չաւելոյր (ἐπιτιθήσιν). քանզի լուեալ ի Պեփղագոնացեաց աշխարհին (ἐθνός) բազում լինել Նաւատիանոսականն աղանդոյն, և առաւել ի Մանտինոնի (Μαντινέων), պատեհ համարէր՝ որպէս զի (եթէ) ոչ զայսքան բազմութիւն եկեղեցականն արանց է վարկանիլ վարել

(ἐλαύνεσθαι). և յորս զուեղս զաւրականաց՝ կամաւք թաղաւորին ի Պեփղագոնիա առաքեաց, որպէս զի յաւէ վառելոցն՝ զարիա նոսականն ընկալցին զկարծիս (δόξαν). Իսկ բնակեալքն ի Մանտինոն՝ նախանձաւ աղանդոյն զայրագնեալք, հսկեցան (εἰρηάζατο) հակառակ (ἀπενόα) զաւրականացն, և եղեալք միանշամայն բազմութիւն յոյժ՝ և առեալ մանգաղս և զերանդիս և կացինս և ամեռայնիւ զկպեցնելով պիտու՝ հանդիպեալք պատահին զաւրականացն. և ի լինել խառնակութեանն՝ բազումք ի Պեփղագոնացն մեռան, բայց ի զաւրականացն առ սակաւ ինչ (πλὴν ὀλίγων) ամենեքեանն: Չայս՝ ես ի վայրբանակ Պեփղագոնեցւոյ լուայ, որ աւեր լինել ի մարտին. և ասեմ զայս և այլ բազումք ի Պեփղագոնացեացն:

Այսպիսիք այսուհետեւ (τοιαῦτα μὲν οὖν τὰ) Մակեդոնիք՝ յաղագս քրիստոնէութեան ռզդոյրիս (κατορθώματα), սպանութիւնք և մարտք և ցեղական պատերազմութիւնք: Բայց այս իր՝ ոչ միայն յանիրաւեցելոցն, այլ և յորոց ընտանեբար առ նա եղելոցն՝ զիրան տառապանքն՝ հակառակ նորա զործեաց. առհարա (περὸς ἐχρούς) և ընդեան թաղաւորին, և վասն այսորիկ և վասն միւսոյն պատճառոյ՝ այսպիսի ինչ: Տեսն, ուրախաբար տապանակն, յորում մարմին թաղաւորին կոտորանքն կայր, էր մերձ յանկանել. և էին ապա յաղագս այնորիկ դարանեալք (προσεδρεύνοντες) ի նմա, և որք աղաւթէին՝ յերկրիկ մեծի: Մակեդոնիոս՝ ապա կամեցաւ փոխել զոսկերս թաղաւորին, որպէս զի մի ըմբռնեացի (συστήσῃ) յանկանէն տա-

1. Այս տեղիս խնդրական է. Ալլատիոսի օրինակն՝ կ'ամբողջացնէ զայն, որուն կը համապատասխանէ Յիւլիանոսի կողմէն զբաւառնէին՝ custodes ejus, այսինքն է, պահապանք տաճարին: Վաղեհոս՝ աղիւղ չհամարելով զայն, կը տէրէ թէ προσεδρεύοντες բացառութեամբ հակառակի են անոնք, որք ընդերկար կը յամեն ի տաճարին, և պատճառաւոր աղաւթելոյ՝ հոն կը նստին: Հայոյն դարանեալք բառն ապառաւութեամբ ևս կամ հոն բնակողներ կը նշանակէ:

1. Վերոյիշեալ յոյն օրինակին մէջ կը պակասի բառս, որ քաջամայրեալ քերականական կազմութեամբն՝ յոյժ հայկական է:

այսման Զայս ծանուցեալ ժողովրդին՝ ար-
դելու ձեռնարկէին, ասելով. Ոչ ոսմեք՝ (μη
δέ) փոխաբերել զմարմին թագաւորին, քանզի
հաւասար նշողից է լինել. և պատառեալ
լինէր յայնժամ. վաղվազակի (ժողովուրդն)
յերկուս հառուածս. և ոմանք՝ ոչ ինչ փա-
սիլ ի փոխաբերելն զմեռեալն ասէին, իսկ
այլք՝ անատար (ἀνάστων) զեղեալն ասէին. և
ժողովէին յայնժամ և որք համագոյութեանն
խորհրդոյ եղելուսն (γύγνων) ընդդիմա-
ցեալք. իսկ Մակեդոնի՝ փոքր ինչ, ընդդէմ
ասաւագն իւր, հոգ տարեալ, բերել զմարմին
թագաւորին յեկեղեցին, յորում մարմին
վկային Ակակայ կայր, Ալսորիկ եղելոյ՝
ընթացուսն երկինացիցն (συνδρομή τῶν διχο-
νοούτων) յեկեղեցին յայն փութեանակի լի-
նէր. և ընդվիմանային միմեանց կողմանքն,
և անփութաբար ըմբռնեալք՝ ապականէին.
Էւ լինի սպանումն մարդկան յոյժ, որպէս
զի և զաւիթ եկեղեցւոյն այնորիկ՝ շնու ա-
րեամբ, և ջրհորոյն՝ որ անդ՝ վերադիւի
յարեռնէն, և հոսիլ նմա և ի սրահն՝ որ կայր,
և մինչև ցիողոցն նորին. Զայս զանցս լուեալ
թագաւորին՝ բարկեալոյր ընդդէմ Մակե-
դոնի, և վասն կորուսելոցն, և զի զմարմին
հաւրն նորա՝ շարժել արտաքոյ կամացն նորա
յանդգնեցաւ. Թողեալ ապա զարևոտայինցն
կողմանց հոգալ Յուլիանոսի, ինքն յարեւելս
կոյս գնայր. որպէս զի ապա Մակեդոն՝ փոքր
ինչ յետոյ անկաւ, զոյն ինչ՝ փոխանակ ալա-
քան յարեաց՝ պայս տալով դատաստան, զոր
յետոյ ապա ասացից. Բայց յաղապս երկրորդ
ժողովոյն, որում ընդդէմ Արմինի ժողո-
վոյն՝ ըստ՝ արեւելից՝ լինել հրամայեաց թա-
գաւորն, այժմ պատմեցից.

Ընդունելի լինէր նախ ի Նիկիովիտ Բիւ-
թինիոյ զեպիսկոպոս(ս)նան ժողովել. իսկ անդ
զնոցայն մուտ՝ և հաւա շարժն մեծ՝ եղեալ ի
վերայ, յորմէ և պատահեաց Նիկիովիտիոցն
քաղաքին անկանիւք Այս եղև առ հիպա-
ստասեքն Դատիանոսի՝ և Եփեսոսիտի.

Սեպտեմբերի ամսոյ (յոյնն ունի՝ ծղծոյն
εἰκάδα τοῦ Αὐγουστοῦ μηνός). Խորհէին
այնուհեակ փոխել զժողովն հռչակ ի նա (εἰς
τὴν γειτνιάσουσαν αὐτῇ) ի Նիկիա. իսկ այս՝
առժամայն ոչ թուեցաւ, այլ ի Տարսոս կիւ-
լիկեցալ թուեցաւ ժողովիլ. Ապա և ոչ
այսորիկ եղելոյ համոյն (τοῦτοῦ ἀρρέσαντος) ի
Սիւլիկիա Սաւրիոյ, ի կողեցեալն Տուքիա,
ժողովեցան. իսկ զայս ի նմին ամի արարին,
առ հիպատոսաւքն Եւսեբիոսի և իւպատայ.
Էւ էին ժողովեալք՝ թուով ձեւ. Էւ ընդ
նոսա մին յարեւելականաց՝ առ Թագաւոր՝
Ղեոնաս անուն, որոյ առաջի գնել զչաղագս
(τὸ περὶ) հաւատոյն խնդիր՝ Թագաւորին ա-
սեր հրաման. և Հրամայեալ լինէր զալ և Ղաւ-
սիկիոս, որ ըստ (κατὰ) Ասորաց՝ զաւա-
կանացն առաջնորդ, պատառելով պիտոյից
եպիսկոպոսաց. Առ այսուիկ ժողովեալք ի Է.
Սեպտեմբերի ամսոյ (տի՝ թծծոյն καὶ εἰκάδι
τοῦ Σεπτεμβρίου μηνός), հրապարակաւ խաւ-
սէին. քանզի առնթրել էին և երագա-
գրաւդք՝ (δξύραφοι) զառ ի յիւրաքանիւրոցն
ասացեալս նշանել. յորոց, ըստ իւրաքանիւր
ուրուք ի ժողովուրն. զՄարինին խնդրեցեան
ուսմասեղքն՝ ի ձեռն երկայնագոսնից եղեալ
(διὰ μακροτέρων և χελεμένων). բայց մեք ի
պիտիսն միայն ընթացեալք՝ զիցուք.

Յառաջում աւուր ժողովեցելոցն՝ Ղեոնաս
զիւրաքանիւր ուրուք զքոռակաւսն (δοχασύνα)
առաջի գնել հրամայէր. բայց որք մերձն՝
(կային = οἱ δὲ παρόντες) ոչ ասացին
շարժել խնդիր ինչ՝ յառաջ քան զժողովել
պակասեցելոցն. քանզի էին պակաս եպիս-
կոպոսեւք. Մակեդոնիոս՝ յախա անկեալ
պակասիւր. իսկ Պատառփիլոս՝ աւացառարիւսն

Ընթերցեալն կը հաստատուի նաև հիւպատո-
սական պաշտօնադրութե (Fasti Consularibus),
ուր Δατιανὸς զըսուած է, համաձայն հայոյն:

1. Յոյնն ունի 'Ισθαρ(αν. ոսկայն զիտելու
է, որ այս անհամաձայնութիւնն հայ թարգման-
չին անհասկացողութենէն յառաջ եկած չէ,
այլ պատմական հմտութենէ. վասն զի վերջերս
Կ. Շէնկ (տես Biz. Zeitschrift, 1896, S. 296 ff.)
ցոյց տաւաւ, թէ Իստարեանք՝ ծագումով Առ-
րի էին:

1. Լուելայն կ'իմացուի՝ արժան է. հայն
խանգարուած ըլլալու է:

2. Յոյնն՝ վրիպակաւ ունի: Τατιανὸς, հայոյն

ասէր (ունել — ὁφθαλμῶν ἔλγε), և վասն այսորիկ ի Պոսաստին Սիւնկիոյ հարկ լինել բնակիլ: Իսկ յայլոցն՝ իւրաքանչիւր ոք պատճառս ինչ լերնացելոցն նախակարգէին: Եւ վասն զի սոցա ոչ եկելոց՝ Ղեռնաս առաջի գնել պատրաստէր զինորոյն իրս, որք առաքեթերն (οἱ παρόντες) առ ժամայն ճեպէին, իրր գի (ὧς οὐδ' ἦν) ոչ ինչ շարժեցեն խնդիր, եթէ ոչ՝ նախ վարք ամբաստանելոցն զննեսցին. քանզի ամբաստանեալք լինէին յայնժամ՝ ճախիկն (πρότερον) կիրիդիոս՝ Երուստաղէմացոյ, և Ստաթիոս՝ Եբեստիոյ Հայոց, և այլք ոմանք, Յայմանէ՝ Վինաքանութիւնն՝ յորս առնթրեն (կային) անկաւ. քանզի ոմանք՝ զվարս ամբաստանեցելոցն յառաջ քննել ասէին. իսկ այլք՝ զյաղագս հաւատոյն առաջի գնել խնդիր: Բայց շարժէր զվէճն՝ յորով թագաւորին կամք. քանզի թուղթ նորա բերիւր յառաջագոյն, այժմ՝ զայս նախկին խնդրել նրամայելով, և յայլ ժամ՝ զմիւսն. և յաղագս այսորիկ վիճոյն ձգեցեցոյ՝ հերձուած յոր առնթրեն (կային) մտանէր: Եւ այս եղև սկիզբն պատճառոյ և զՍիւնկիոյ ժողովն յերկուս պատշաձել (ἑταίρῳ) մատուն, և համարեալ լինէին մին կողմանն՝ Ակակիոս Կեսարաց, որ թ Պաղեստին, Գէորգիոս՝ Աղէքսանդրոյ, Ուսանիոս՝ Տիրուսի, Եւպրոսիոս՝ Անդիոսի, որոց Վրմիայն յայլոցն բնկեթէին: Իսկ միւսոյ (կողմանն) — ἑτέρου) Գիորգայ՝ Ղառոցիկեցոյ, որ յԱսորիւն, Սոփոնիոս՝ Պոմպիլուպուսի Պիփագուսիոյ, Եղեւսիոս՝ Կիւզիկոսի, որոց հետեւին բազումք: Եւ մինչդեռ աւելր նախկին խնդիր հաւատոյն, որք կողմանն Ակակայ՝ զնկիւայն հաւատ յայտնապէս արհաւմարհեցին, այլ իմն հաւատ թ մէջ բերեալ աւրինակէին: Իսկ միւսոյ կողմանն՝ որք թուովն առաւելագոյնք, զայս ամենայն զնիւկիայ հաւատոյն բնդունէին, բայց միայն

զհամագոհութիւնն պարտաւէին և Բագուս ինչ ապա, մինչև ցտանգանալ երեկորին, առ միմեանս յաղագս այսորիկ մարտուցելոց. յետոյ Սիւնկիոսն՝ Տարսոսի եկեղեցոյն առաջնորդ, մեծամեծս գտէր. Ոչ պարտ լինել սահելով (ἀέγων) կարգել ճոր գիր (καύνην ὑπαγορεύσιν) հաւատոյն, այլ զոր յայնժամ նախկին յԱնդիոսիա թ նաւակառան կարգեալ պարտ է բնդունել և Սորա ասացեալ զայս, որք Ակակայն (էին) — οἱ μὲν περὶ Ἀκάκιον) էլին. իսկ միւսոյ կողմանն՝ բերեալ զհաւատն Անդիոսայ և ընթերցեալ, լուծին յայնժամ աւար զժողովն. և զնոյն հետեայն թ Սիւնկիոյ եկեղեցին մտեալք և փակեալ զորուսն, զընթերցեալն (ἀναγνώσθεισαν) հաւատ՝ ճնրագործելով (ὑπογράφοντες) հաւատաւէին:

Ստորագրէին, և սակս պակասցին ոմանց, առ ընթերցն ընթերցաւորք և քարկաւաքունք. թ ճեռն որոց՝ պակասքն հաւատաւեղ զսահման հաւատոյն խառնութեանց և Բայց Ակակիոս և որք նորա կողմանն՝ զեղեարսն պարտաւէին, եթէ զեկեղեցին փակեալք՝ ենթագրէին. քանզի, ասէ, որ թ բռնապատանաց եղեալն՝ անփորձ (ἄδókima) է և կասկածանաւք լի: Զայս ասէր՝ կամելով այլ կարգադրութիւն հաւատոյ փոխառով մտնանել, զոր աւելալ պատրաստ՝ ընթերցնոյր իշխանացի Ղառոցիկոսի և Ղեռնասոյ. զի միայն զայն բնդունել փութայր և Բայց՝ այսոցիկ աւելի (τούτων μὲν πλεόν) ոչինչ յաւուրն երկրորդի եղև:

Իսկ յաւուրն երրորդի՝ Ղեռնաս առեալ մայն զկղզմանն ժողովել փութայր, ըստ որում ոչ պակասեաց Մակեդոնիոս Կոստան. զինուպուրի, այլ և ոչ Բասիլ Անկիւրոյ: Եւ զի ապա որք միւսոյ կողմանն՝ յայլ ժողովեցան, առգէն որք Ակակայն՝ պատահել ոչ կամեցան, ասելով, պարտ լինել նախ հանել թ ժողովոյն զյառաջագոյն ընկեցեալոյն և զաւսմանայ ամբաստանեալոյն: Իսկ վիճեցելոց՝ այս մ(ան)յասանեղ եղև բնկաչեալ (τούτο μάλλον ἐκράτῃσεν). Ելին թ պատճառուք (ἐν αἰτιάζσει) հանդիպեալքն, և փոխանակ՝ մտին որք Ակակայն և Յայման՝ ապա Ղեռնաս՝ զիրս ասաց տալ նմա, յորոց (παρὰ τῶν περὶ) Ակակայն թաքուցեալ՝ իբր թէ հաւատոյն

1. Այստեղ խանգարուած է հայն՝ ընդօրինակողն ձեռքով. վասն զի յուն. բնագիրն ունի ուղղակիւ հոլովով Դածորոս Ըածուսալէ: Հայե. բնիկ մնիթլապէս յաշորդող անուանւքն իսկ զայս կը հաստատեն:

հրաման իցէ այսորիկ¹ եկելոյ (ὕπαρχοῦσις),
իսկ այսորիկ և յայտնապէս մարտուցելոյ
յառաջացելոցն (τοῖς προαφθούσιν), որպէս
զի որք առնութիւն (կային)՝ լռեցին, այլ զի
ստաւել հաւատոյ ինչ իրս ունել՝ զգիրսն
կարծեցեալք :

Այդքան և Ակակայ հաւատոյն շարակար-
գութիւն՝ հանդերձ առաջարանօքն՝ եղև ըն-
թերցեալ. զայս ունելոյ զարթնակ հաւատ²
(τῆς πίστεως σύνταγμα) որոց Ակակայն .
« Եւք ժողովեալ ի Սելեկիա Սաւորոյ՝ թա-
գաւորական՝ հրամանաւ՝ յերիկեան աւուրն ,
որ էր յառաջ քան զհինգ կողանդացն Ոկ-
տոմբոսի³ (Ὀκτωβρίον), և զամենայն գիտյթ
մեծաք՝ ամենայն բարեկարգութեամբ զեա-
ղադութիւն եկեղեցւոյ պահել, և յաղագս
հաւատոյն՝ քարեկեցաբար (εὐστοθῶς) ընդու-
նել, որպէս և հրամայեաց աստուածաւորն
մեր թագաւորն կոստանդինս, ըստ մարգա-
րէական և աւետարանական ձայնից . և
ոչինչ արտաքոյ աստուածային զրոց մեծանել
յեկեղեցական հաւատ և թայց՝ վասն զի Ե-
մանք ի ժողովուն՝ զամանս ի մէնջ թշնա-
մանցքին, իսկ զայլս ըմբերանցքին, ոչ սու-
եալք թոյլ խաւաւք . իսկ զայլս արգելին
ակամայս, իսկ (և) զընկեցեալսն ի յաղովից
նահանգաց՝ տնէին ընդ ընդեանս, զարտա-

քոյ կանոնին կարգաւորսն՝ ածէին առ իշրեանց
(μεθ' ἐξουτῶν), որպէս զի ամենայն ուստեք
լի խառնութեամբ զըլ աստեմին, որպէս և
պայծառացեայս կոմսս Ղեոնաս և Ղատի-
կիոս՝ առաջևորդ (ἡγούμενος) աշխարհին՝
յանդիման տեւալ(ե)ամբ (αὐτοψία) ընկալան :
Այսորիկ սակս՝ խաւսինք զայս, որպէս ոչ թէ
փախչիմք յեղեպ տանուտերականն (αὐθῆν-
ταιχίῃ) հաւատոյ, զոր ի նաշակատիւն¹ (ἐγ-
καίνοις) Անդիորայ եղեալ, որ քէ (ἐλ καὶ)
մանաւանդ և հարբն մեր յայնմ ժամանակի՝
ենքականացեալն (ὑποκαίμενον) խնդրոյն ընթա-
նային . վասն զի զբազումս ամբոխեաց հա-
մագոյնորիւն (τὸ δμῶσυστον) և նմանագոյն-
րիւն (τὸ δμῶσυστον) յանդեալսն ժամանակս
և մինչև ցայժմ՝ Այլ ի արգ, որպէս (ἐγ-
τίω²) ասի, նորահատեղ (καίνωτομεισθαι)
յոմանց անմեղանութիւն Որդւոյն՝ առ Հայր,
յաղագս այսորիկ՝ համագոյնութիւնն և զնմա-
նագոյնութիւնն ի բաց հանեմք, որպէս զաւ-
տար զրոց . իսկ զանմանն՝ նզովեմք . և
ամենեքեան, որք այսպիսիքն հանդիպին,
աւտարս համարիմք եկեղեցւոյն . իսկ զնմա-
նութիւնն Հայր առ Որդի՝ յայտնաբար
(σπεύδῃς) խոստովանիմք, ըստ Առաքելոյն ա-
սելոյն . « Որ է պատկեր « Աստուծոյ ան-
թեւութի », և հաւատամք և խոստովանիմք . .

1. Թոյնն չաւնի այսորիկ. հայն խաւագարուած
Վերել պոս տեղ :

2. Հաւանորէն հապատոյ ըլլալու եր և հին
օրինակին մէջ, ինչպէս որ ռւնի յոյն բնագիրն :

3. Ընդօրինակողի ձեռքը վ տաղը՝ մէնի փո-
խուած է այն տեղ . բայց ըստ նախնեաց՝ սու-
վորական է՝ յունի Ե առաւն՝ եր փոխելով . որ
և բնականապէս կ'ուզէ մ'իւնայ տաղը :

1. Հայերէն ընթերցուածս քաջ կը համա-
նայնէ Վեոն Ալլատիոսի օրինակին, երբ Ղեոնաս
կոմսը յուրաւ կը դնէ՝ քան զՂատիկիոս . հե-
տեաբար, ընտրելազոյն օրինակի վերայ եղած է :

2. Վերպակաւ յոյն բնագրի մէջ ո՛ր միա-
ցուած է ձրժմակային հետ, ինչպէս ակնհերե
կը դնէ հայն որոշմամբ :

